

Տեսակ. — Église de Digor.

բաժին Ռուսաց՝ գրգռեցին զնոսա։ — Ի հիւսիսի արևմտից ամենեցուն սոցա առ գետոնն Ղարսայ կան երկու գիւղք Փէրիթ անուն, Մէծ և Փոքր. յառաջնումն կայ քառակուսի ամրոցաձև տեղի վեցեքումքք բոլորշի աշտարակք, 77′ յերկայնութիւն և 65′ ի լայնութիւն, և խաչարձան ի բարձու։ — Ա.յսոքիկ և այլ բազում տեղիք և մնացուածք հին շինուածոց են ի յաւերժայիշատակ վիճակիս Շիրակայ. այլ աւաղ զի ոչ միայն հնութեամբ ժամանակի, այլ և բռնութեամբ զինու և քինու պատերազմողաց՝ ևս քան զեւս յաւեր և յապականութիւն մատնին և ի գրեզն մերում զայս։

43. ՁԱԼՖԻՐԱՆ և ԿԱՂԶՈՒԱՆ վիճակք ի հարաւոյ կան Շօրէկէլի և Ղարսայ, և ի հիւսիսոյ Նահանգին Պայեզիտու, յարևմտից Ռուսաց Հայաստանի, և ունին զհին գաւառսն ԲԸՐԱԲՈՒՆԻՔ կամ ԵՐԱՍԽԱՁՈՐ. քանզի Երասխ գետ իջեալ ի կողմանց Բասենոյ հատանէ զերկիրս զայս ընդ խորաձոր լայն և քարակուռ, և ելանէ ի միջնագաւառս Այրարատայ։ Են և ի սմա ոչ սակաւ նշանաւոր տեղիք ըստ հին յիշատակաց. որոց գլխաւոր է ԿԱՂԶՈՒԱՆ կամ ԿԱՂԶՄԱՆ ըստ արդի հնչման, յաջմէ կամ ի հարաւոյ Երասխայ, ի բարձու 4670′, ի հինն ԳԱՐԵԳԵՂԵԱՆ կամ ԳԱՐԵԳԼԽՆԻՑ գաւառի. չէնն անչքացեալ է և սակաւամարդ, այլ յոյժ զուարճալի այգեօք և պարտիզօք, որք մատակարարեն պտուղ Շիրակայ և Վանանդայ. գեղեցիկ են և տեսարանք վայրացն բարձանց առ Կաղզուանաւ։ — Զորիւք ժամուք ի հարաւոյ նորա, ուր լեռնախիտ և ափափայ և խորաձոր վայրք են, կայ Վարդէհէր կամ Վարդէի-Հայր ըստ նախնեաց, անուանի մենաստան, այժմ ուխտատեղի Լեռն սրբոց Թարգմանչացն Թադեոսի և Վարոսի, որոց դամբանք պատուին ի կիսաւեր եկեղեցւոջ. և մենարանք ճգնութեան նոցա ի մերձակայ բլերն, և ի դժուարակոխ ձորամէջս, որ Վիշապայոր կոչին. բղխեն անդ և ջուր ցուրա. գոն և այլ ոչ սակաւ ճգնութեանց վայրք յանվայր տեղւոջս և սրբոց քնարանք. որք առաւել ևս ամայացան և անմարդացան դաղթելով Հայոց ի Ռուսս։ — Ի հիւսիսոյ արևմտից Վարդիհերայ կայ Ղարավանք, երիւք կիսափուլ մատրամբք հնովք, յորս պատարագէին սուրբքս յիշեցեալք։ — Յարևմտից հիւսիսոյ Ղարավանից և յահեկէ Երասխայ կայ փոքրիկ լճակն Զանգի առ համանուն գիւղս բարձու ի լերանցամէջս, յորում եկեղեցի հոյակապ և դմբեթաւոր ի սևագոյն քարանց, 62′ երկայն, 44′ լայն, վրացի արձանագրութեամբք, որք թուին ի սկզբան պայազատութեան Բագրատունեաց